

ՆՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՏԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Գարեգին Նժդեհի գրական ժառանգությունն ուսումնասիրելիս անմիջապես աչքի է զարնում մայրենի լեզուի՝ հեղինակի քաջիմացությունը՝ ոչ միայն ժամանակի արեւելահայերենի, այլև գրաբարի ու արեւմտահայերենի, բառային ճոխությունը, գրելու իրօրինակ ոճը, բառապաշարի բոլոր շերտերին դիմելու սկզբունքը: Տարկ է յիշարարել, որ նա հայեցի կրթություն ստացել է միայն իր ծննդավայր Կզնուս գիւղի ծխական դպրոցում, ապա սովորել է Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական բաժնում (նոյնպէս՝ ռուսերէն) եւ ապա Սօֆիայի ռազմական սպայական ուսումնարանում՝ բուլղարերէն: Լինելով զինուորական՝ նրա գիտակցական կեանքի մի հատուածը՝ մօտ ութ տարի, անցել է ռազմադաշտերում, մեկ այլ հատուածը՝ տասնհինգ տարի, բանտերում՝ որպէս յեղափոխական ու հասարակական գործիչ: Ուրեմն՝ նրա լեզուի հարստությունը բնատուր նաեւ բանասիրական գերօժտածութեան, ինքնագարգացման արդիւնք է, եւ ապա պայմանաւորուած է մայրենի հայերենի ու հայրենասիրութեան փոխկապակցութեամբ: «Ինքնակենսագրություն» յուշագրությունից տեղեկանում ենք, որ 1921 թ. կեսերին, Տայաստանից հեռանալիս, իր հետ է վերցնում Արաքսի ափին խփում վագրի մորթին, «...Սիւնեաց Դրօշակը, ... եւ մի հին Տայկազեան բառարան - իմ միակ միւսթարիչը տարագրանքի մէջ»¹: Ինչպէս ցոյց կտան տյն յօդուածում բերուելիք փաստերը, նա հիմնովին ուսումնասիրել է այդ բառարանը եւ իր երկերը շարադրելիս մշտապէս դիմել նրանում մատուցուած բառազանձին: Նժդեհի ստեղծագործութիւններում, ինչ ժանրի էլ պարկանելիս լինեն, հնաբանութիւններն աչքի են զարնում: Նկարի ունենք մասնատրապէս այն բառերն ու բառային տարբերակները, որոնք սկսած արդէն Ստ. Մալխասեանցի «Տայերէն բացատրական բառարան»-ից (1944-1945 թթ.), համարում են հնացած՝ ունենալով համապատասխան նշան՝ շրջանագիծ կէտով, իսկ յետագայ հայերէնի այլեայլ կարգի բառարաններում «հնգ.» (հնացած) ռճական նշումը: Կքննուեն նաեւ գրաբարից ժառանգած, բայց այժմ անգործածական քերականական տարրերը:

1. **Բառեր:** Գարեգին Նժդեհը հնաբանութիւնների է դիմում սկզբունքօրէն՝ հետամտւոյ ազգի բոլոր սերունդների յաջորդափոխութեան անխզելի կապին իր բոլոր դրսեւորումներով՝ պարմական, աշխարհագրական, բնախօսական, հոգեբանական, մշակութային եւ, ինչ խօսք, լեզուական: Դրանք մեզ համար են հնաբանութիւններ, քանի որ ներկայումս կան չեն գործածուում, կան հագուադէպ են գործածուում, բայց ոչ Նժդեհի, որ համարում է նոյնքան պահանջուող, որքան իր ժամանակի այլ կարգի բառերը: Նա գործնականում

¹ Գարեգին Նժդեհ, Տարբերիք, Երեւան, 2006, էջ 432: Այսուհետեւ այս գրքի յղումները՝ շարադրանքի մէջ:

ներկայացնում է ժամանակների շարունակական լինելը լեզուական առումով, համընդգրկուն բնոյթը: Խնդրոյ առարկայ հարցի հետ կապուած հարկ կլինի կանգ առնել հետեւեալ իրողութիւնների վրայ:

ա. Նոյնանիշ բառերի առկայութեան դէպքում նախապատրութիւնը պրոտում է հնացածի, յաճախ մոռացուածի գործածութեանը: Ինչպէս. անուղղելի - անուղղայ: «Մեր ժողովուրդը **անուղղայ** է իր անվտայութեան մեջ...» (55): Անգոր - ապագոր. «Նայաստանը չի կարող աւագահիմն **ապագոր** եւ դժբախտ լինել» (113): Աղբ, ցեխ - գոնեհ. «Սրբութեան բարձունքներից մինչեւ գոյութեան **գոնեհ** - ահա՛ ուղիների այն աշխարհը, ուր դեգերում է մարդկային ոգին» (364): Եւ կամ յետեւեալ օրինակներում: Մենամարտ, մրցութիւն - գուպար. «...մի մասերեւոյթն է ահարկու **գուպարի**... ազգայնական եւ հակազգային փարբերի...» (189): Անպատուել, վիրատուել - թշնամանել. «...այսօր Գարիբալդիի դէմ սպգարանող ու **թշնամանող**, երբ նա լքած է Նէապոլը» (281): Նկոնութիւն, պարտութիւն - կորանք. «Շատ բան խնայուած կլինէր հայութեան - փառապանք, արիւննէր, **կորանք**, եթէ...» (340): Կուրակել - կուրել. «...ժողովուրդ, որ նիւթական բարիքներ **կուրել** եւ ամբարել գիլել ...» (56): Յանկարծակի, անսպասելի - յեղակարծ. «Ահա՛ հասաւ գոծկանը... ով է այդ եղերականը եւ ինչ է խորհրդանշում նրա երեսունը **յեղակարծ**» (341): Այսպէս՝ յիշեալ մօտեցմանը համապարասխանող միւս դէպքերում: Այժմ նման բառազոյգերի մի շարք. ծոյլ - յոյլ (7), մեծաբանել, ճոռոմաբանել - ճառարել (103), նախանձ - մախանք (404), կեղծաւոր, բամբաստող - շոգմոգ (183), պարծենալ, հպարտանալ - սոնքալ (399), չնչին, խղճուկ - փանաքի (634), թուլանալ, անգորանալ - փանաքիանալ (512), քմանք - քծինք (279), մարշալ - մարաջախար (383):

Գործածուել են նաեւ հնացած յովակական ու խոնարհական բառաձեւեր՝ ազինք, առեց, փոխանակ՝ ցեղեր, առաւ. «...ազգեր եւ **ազինք** մարքով կը ծնրադրեն ու կը խոկան մի նուիրական հողաթմբի առջեւ» (144): «Եւսկորով երգեց իր «Նայեր»-ը եւ իր երգը թեւ **առեց**, թռաւ...» (592):

Ասուածը վերաբերում է նաեւ կայուն բառակապակցութիւններին, որոնցից շատ յաճախ դարձեալ նախընտրուած է հինը կամ գրաբարեանը: Մի խօսքով - ի մի բան. «...**ի մի բան**՝ բիրապարկիի հոգեկան ոյժերդ» (592): Վեճ ու կռիւ, փութութիւն - կազ ու կռիւ. «...աստ եւ անդ **կազ ու կռիւ** կը սերմանէ...» (383):

Նախընտրած բառերի մի մասը ոչ միայն հնացած է, այլեւ ընդհանրապէս հազուադէպ, երբեմն խիստ հազուադէպ գործածութիւն ունի: Բայց Նժդեհը դրանք հրապարակ է բերում՝ անցեալի հետ եւս մի կապ ունենալու համար: Այդպիսիք են՝ անարգ - անարգու, անհետանալ - անհետել, սաստիկ զայրոյթ - զայրուցք, թարերաբեմ, թարբոն - թարբ, խորհրդատու - խորհրդօրէն. «...**անարգու** արարքների մասին...» (177). «...ելել են նուաճելու... անապարդ, այնպէս, որ դա **անհետի**... իրենց երկրի քարտէսէն» (528). «...եւ փառապանքի **զայրուցքի** մէջ յաճախ աղաղակեց...» (590). «Առաւելապէս Ամերիկան է այդ պայքարի **թարբը**» (186). «Աստիճիւր **խորհրդօրէն** ու փութութիւն ինչ են փսփսում...»²:

բ. Ննացած բառերի դիմելու երկրորդ շարժառիթն այն է, որ ժամանակակից լեզուն դրանց նոյնանիշները կամ ընդհանրապէս չունի, կամ սակաւ դէպքերում ունի կայուն բա-

2 Գալեգին Նժդեհ, Գրական երկեր, Երևան, 2003, էջ 13:

ռականակցությունների փեսքով: Ուստի առանկ էս այդպիսի բառերը կրկին պէտք է գործածել եւ հարստացնել խօսքը: Դիւցնել (կրծքով կերակրել, ծիծ փայլ). «Մտածումս սիրաշար մօր պէս կը դիւցնէ ազգային հպարտութեան իմ զգացումը» (163): Բառը գործածուած է փոխաբերաբար՝ «նիւթեր, փաստեր փայլ» իմաստով: Նրաժարիմը (հրաժարուելու, մերժելու սկզբունք). Վերցունելով գրաբարի խոնարհական ձեւից՝ գործածուել է գոյականաբար դարձեալ բայական « հաւաքամբ» բառի համաբանութեամբ: «Բոլշեւիկը իր **հրաժարիմըն** ունի...» (516): Մերագնեայ (մեր ազգին, ցեղին պատրկանող, մեր ցեղի). «**Մերագնեայ** ներքին ամէն մի հակառակորդ անձանօթ մի եղբայր է, որին հոգէփոխելու պարտականութիւն ունինք» (155): Ոգէխառնուիլ (հոգով միմեանց հետ կապուիլ). «...կոգէկոյցն հայ զինուորին ու զօրավարին... **կ'ոգէխառնուիմ** նրանց հետ...» (163): Յվերջ (մինչեւ վերջ). «Ես երկար բաղձացի եւ գուցէ **ցվերջ** պիտի բաղձամ...»³: Աստուածապարզ (Աստծով զարդարուած, փառաւորուած, սրբազան). «...իր (Ահարօնեանի) խօսքը Նայաստանի **Աստուածապարզ** բնութեան թախմութիւնն ունի» (15):

գ. Այս կէտն առնչութիւն ունի բազմիմաստութեան հետ: Նանդիպում են այնպիսի բազմիմաստ բառեր, որոնց որոշ իմաստներ Ի. դարի առաջին կէսին գործածութիւնից դուրս գալու ճանապարհին էին, իսկ մեր օրերում արդէն մոռացուած են: Այդպիսի, եթէ կարելի է կոչել, ակամա հնաբանութիւնները քանակով այնքան շատ են, որ մեզ համար ոճական արժէք են ձեռք բերել: Ահա համապատասխան օրինակներ: Նանդիպում ենք անցք բառի հետեւեալ իմաստներին. 1.անց կենալը, անցում: 2.Դէպք, պատահար: Ինչպէս. «Պարսից կառաւարտիւնը... Արաքսի հայկական ափում կուրակուած բազմութիւնից յանկարծակիի եկած՝ կարգադրեց դադարեցնել գաղթականութեան **անցքը**»⁴: «Ինչու պայքարեց Լեւոնահայաստանը» յուշագրութիւնից բերուած այս հատուածում անցք բառը գործածուած է /1./ իմաստով, հետեւեալ մէջբերումներում՝ /2./ իմաստով. «...**անցքերն** եկան հաստատելու, թէ... քանդուած են հոգով» (209). «...կան քաղաքական **անցքերի** այնպիսի ծախող դասաւորումներ...» (288): Ներկայումս «անցք» բառի ամենագործածական իմաստն է՝ «ծակ» ու նմանողութեամբ եւս մի քանի իմաստ. 2. ասեղի անցք: 3. ելքի համար փող:

«Արուեստ» բառի հնազաւ առաջին իմաստն է՝ արհեստ: Ամանցելով սրանից՝ Նժդեհը գործածում է արուեստագիտութիւն՝ արհեստների, փէխնիկական մասնագիտութիւնների փիրապետում, իմացութիւն, ինչպէս նաեւ՝ էլեկտրօարուեստագիտութիւն, արուեստագիտաբար (փէխնիկապէս արհեստներին վերաբերող մասնագիտութիւնների իմացութեամբ), արուեստական (փէխնիկական) եւ նման կազմութեամբ մի քանի այլ բառեր: «**Արուեստագիտութեան, ...էլեկտրօարուեստագիտութեան** արագ եւ հրաշագործ յառաջադիմութեան մեր օրերում...» (130). «...որդիները ասելողը դարձնէին Նայաստանը պաշտպանող **արուեստական** ամբոյթիւնները» (125). «...ցեղամիջեան պայքարում չկորցնելու համար պէտք է սպառազինել հոգեբանօրէն եւ **արուեստագիտաբար**...» (131): Բառնալ (վերացնել, ոչնչացնել) բայի հիման վրա կազմուած՝ գործածուած է բարձում գոյականը. (1. Վերացում, ոչնչացում: 2. Բռնուել բարձելը, բռնում). «Յասերը վերացնելու համար՝ հիւանդոթիւնը պարճառներ են, որ պէտք է **բառնալ**» (138). «...նպաստում է... չարութեան, ետականութեան **բարձու-**

3 Գարեգին Նժդեհ, Անպիպ բանաստեղծութիւնների ժողովածու. «Տխաթափում», թ. 67:

4 «Նայրենիք» ամսագիր, թիւ 8, 1923:

մին...» (609): Ներկայումս բարձում գոյականի առաջին (վերացում) իմաստը հնացած է, գործածում է երկրորդ (բեռնում) իմաստը: Բնատրոսին բառը հանդիպում է մի իմաստով, որն այժմ արտայայտություն է բնոյթ բառով: Ինչպես. «Դեպքերը Ղափանում աստիճանաբար զարգանում ու խիստ վրանգալից **բնատրոսին** են սրանում...»⁵. «...կռիներին... ծրագրում լուրջ **բնատրոսին** փալ անկարելի է»⁶: Ընկալում ենք՝ վրանգալից բնոյթ, լուրջ բնոյթ՝ «բնատրոսությունը» թողնելով հոգեբանության ոլորտին: Դալար գոյականական բառը հանդիպում է իր նախնական՝ խոտ, սեզ իմաստով: «Զգո՛յձ... **Դալարների** փակ յաճախ մահաթյուն օձ է թաքնում լինում» (1927 թ.) (99): Այժմեան փարածում իմաստը ածականային է՝ 1. մարդաշ, ոչ թօշմած: 2. ճկուն: «Տղա» բառի երեխա, մանուկ իմաստից կազմում գործածում են փոխաբար, փոխամիպ, փոխյութին, այն է՝ երեխայաբար (մանկօրէն), երեխայամիպ, մանկամիպ, երեխայաթին, մանկամիպություն: «Ժողովրդի մի մասի անունից հայտնել միսին՝ հակառակորդին եւ **փոխաբար** ժխտել նրա գոյութեան իրատւոյնը...» (1929 թ.) (69). «...լեռնականի ոգուն անծանօթ մի **փոխաբար** պելտի գլխատրութեամբ կը մըրէր Սիւնիք...»⁷. «...բոլշեվիկների ձախ **փոխյութինը**, որի երեսից այնքան փութեց հայ ժողովուրդը»⁸: 1923 թ. Նժդեհը գործածել է մարգաղաշ բառը՝ 1. պոլիգոն: 2. հրաձգարան: 3. զանազան զենքերի փորձարկման ընդարձակ դաշտ իմաստներով: 1960-ական թուականների վերջից այն առնչություն է միայն սպորտի հետ՝ նշանակելով մարզական վարժանքների եւ մրցումների դաշտ: «Թշնամիները - դեռ **մարգաղաշություն** նա ներշնչում է իր գործին...» (43): «Կարողանալ իշխել հոգիների վրա, ...առանց որին զօրանոցն ու **մարգաղաշոր** հաղթանակներ սպրդեցնելու կարողությունից շատ են հեռու»⁹:

2. Բառային փարբերակներ: Հանրայայտ է, որ ժամանակի ընթացքում բառերի հնչյունակազմերը փոփոխություններ են կրում՝ ենթարկվում են հնչյունափոփոխության, փոփոխություն է ուղղագրությունը, հնչյուններ են աւելանում կամ պակասում, մի հնչյուն փոխարինում է ուրիշով: Նշում բոլոր իրողությունների հետ առնչուող բառային փարբերակներ գտնում ենք ուսումնասիրուող սրեղծագործություններում: Քանի որ իւրաքանչիւր ժամանակի հարազատ է բառի իր ձեւը, իր հնչյունակազմը, ուստի նախընթաց փարբերակները հնանում են եւ դուրս գալիս գործածությունից: Գ. Նժդեհը բառային փարբերակներին միախառն է դիմում՝ մերթ գործածելով իր ժամանակի, մերթ հնացածներ՝ հաւատարիմ իր սկզբունքին՝ չընդհատելու սերունդների լեզուական պարմական ուղին: Կանգ առնենք մեզ համար արդէն հնաբանություն դարձած բառային փարբերակների վրա, ըստ քիչ վերը յիշատակած պարմաների՝ առանձին -առանձին:

ա. Արտասանության եւ ուղղագրության փոփոխություններ: Գարեգին Նժդեհը գրել է դասական ուղղագրությամբ ու մեծ մասամբ արեւելահայերէնով: Մակայն սոյն յօդածում խօսքը մեր երկու ուղղագրությունների կամ երկու լեզուաճիւղերի պարմական սկզբունքային փարբերությունների մասին չէ, ինչպիսիք են՝ է- ե, օ-ո, յ-ի ուղղագրական անցումները եւ միւսները կամ բաղաձայնային փարբեր համակարգերը, այլ խնդրոյ առարկայ գրումաձե-

5 Վրեժարանի կենտրոնական կոմիտեին գրած նամակից, սեպտեմբեր 1920:

6 Հայաստանի Հանրապետության գիտության նախարարին գրած նամակից, սեպտեմբեր 1920:

7 **Ռազմիկ**, Մի պարմական ճշմարտություն, 1941, էջ 19-23:

8 «Հայրենիք» ամսագիր, Ազատ Սիւնիք, թիւ 12, հոկտեմբեր 1925:

9 «Հայրենիք» ամսագիր, Լեռնահայաստանի գոյամարտը, սեպտեմբեր 1923:

ներում արտացոլուած այն բառերը, որոնց հնչիւնակազմերն արեւելահայերէնում վերջնականապէս փաթորոշուցին Ի. դարի ընթացքում՝ պարճառ դառնալով բառային հին ու նոր փաթերակների:

Արարասանական եւ ուղղագրութեան փոփոխութիւնների հետեւանքով առաջացած բառային հին արարերականեր հանդիպում են թէ՛ որպէս բառակապակցութիւններ, թէ՛ որպէս անկախ բառեր: Առաջինի պարագայում կապակցութեան բաղադրիչները ներկայումս համաբարդուած են, ներառուած մէկ բառի շրջանում, այլեւս գրուած են միասին. կարարուել են որոշ արարասանական փոփոխութիւններ: Ունենք մէկ բառ, ուրեմն եւ՝ մէկ բառաշէշ: Բառակապակցութիւնների մի խմբում նկատելի է «եւ» շաղկապի մասնակցութիւնը իրողութեանը: Ներկայիս «այլեւ» շաղկապի փոխարէն հանդիպում ենք «այլ» դերանուն ու «եւ» շաղկապի կապակցութեանը՝ այլ եւ: Ինչպէս. «Սպորտը մարմնակրթանք չէ միայն **այլ եւ** հայրենիքի ինքնապաշտպանութեան ...գօրատր ազդակ»¹⁰. «...ոչ թէ միայն կասեցնում, **այլ եւ** յաճախ անկարելի են դարձնում...» (490). «...Նա փրկեց ոչ միայն նուաճուածի... իրաւունքներին, **այլ եւ** ժողովրդի... ինչքին... **այլ եւ** ֆիզիքական գոյութեան արմարին իսկ» (152): Ներկայիս արարերական եւ-ը գրուելով այլ բառի հետ միասին (այլեւ) հնչում է էլ՝ այլէլ: Այժմեան «երբեիցեւ» բառի դիմաց գրւում ենք երբ եւ իցէ կապակցական արարերակը. «...մի այլ սերունդ իր ցեղէն **երբ եւ իցէ** քառասպել՝ է իր չափ» (192): Ուղղագրական փոփոխութիւնների հետ «եւ» շաղկապի նույն արարասանական արարերութիւնն է մէկ այլ խումբ բառակապակցութիւններում: Նկատելի է «եւս» բաղադրիչի մասնակցութիւնը: Այժմեան «դեռեւս» համաբարդութիւնն ունի իր դեռ եւս բառակապակցական արարերակը: «Ահա՛, **դեռ եւս...** որոշ արարերի... սարկամպութեան մէջ է ողերգութիւնը» (155): Իր նախորդների հետ ձուլվելու պարագայում «եւս» բառի բառաշէշը դրուում է հենց նրա «է» հնչիւնի վրա, քանի որ արարասանումն է « դեռէ՛վս»:

Բառակապակցությունների մի երրորդ խմբում բառային փառքերակների առաջացման մեջ նկատելի է «ի» նախդիրի մասնակցությունը: Որոշակի դեպքերում գրուելով յաջորդող բառից առանձին, այն դիպուել է իբրև սպասարկու բառ: Այնուհետև, նոյն այդ դեպքերում, լեզուական օրենքների ազդեցությամբ (արքասահանական էներգիայի խնայողության ձգվում եւ դադարի վերացում՝ ձուլուել է յաջորդող բառին, առաջ են եկել համաբարդություններ: Այս կերպ այժմեան «իհարկե», «իսպառ» բառերն ունեն իրենց փառքերակները, որոնք հանդիպում են քննուող սրելծագործություններում: Օրինակներ. «...ունին այդ յոյսը...: **Ի հարկէ՛** ոչ» (104). «...նրա համար, որ ցաւում է, գնահաբում - ոչ, **ի հարկէ՛**» (223). «...գոյության կմիւր **ի սպառ** չի անասնացրել մարդը» (182). «...**ի սպառ** մոռացում է ճշմարտութիւնը...» (105):

Ինչպես քիչ վերը նշուեց, հին ու նոր Կարբերականների գոյացումն առընչուում է նաև ինքնուրույն, անկախ բառերի հեղ և, ի դեպ, թանակով անհամեմատ շար են բառակապակցություններից առաջ եկածներից: Արարասանական և ուղղագրական փոփոխություններն իրենց զգալ են Կալիս ամենուրեք՝ բոլոր բառակազմական եղանակներում, ուստի դրանց կհանդիպենք թե՛ այս, թե՛ յաջորդ կերերում: Առայժմ հարկ է կանգ առնել մի թանի դեպքի վրայ:

10 «Նորայապար նամակներ», Հայաստանի ազգային արխիվ, Երեւան, 2011, էջ 23:

Ի. դարի առաջին կեսին որոշ բառերում գրություն էր «ջ» և արտասանություն «չ»: Վաղուց արդեն այդպիսի բառերում նաև գրություն է «չ», որով առաջացել են հին ու նոր բառային փոփոխություններ: Դրանցից են՝ հաչել և հաչոց, նախկիններն են՝ հաջել և հաջոց: Օրինակներ. «...նա **հաջեցնում** էր իր շները...» (161). «...արհեստը են դարձրել իմ անձի դեմ **հաջելը**» (280). «...շնութիւն կ'ունենար **հաջելու...**» (293). «...որի հակազգայնական **հաջոցին**, որպէս պապասխան, գրում են այս փողերը» (278):

Մինչև Ի. դարի երկրորդ կեսը հայերենում զուգահեռաբար գործածություն էին միեւնոյն արմատի «թագ» և «թաք» փոփոխությունները ու դրանցով կազմուած նոյնական բառերը՝ թագցնել - թաքցնել: Նշում ժամանակամիջոցից արեւելահայերենում նախընտրությունը փոխելով «թաք» ձեւին ու դրանով կազմուած բառային փոփոխություններին: Այնպէս որ, եթէ Մր. Մալխասեանցի «Նայերէն բացատրական բառարան»-ում (1944-45 թթ.) յիշատակուած են նշում արմատի երկու ձեւերն էլ, ապա ժամանակակից հայերէնի բառահատոր բառարանում (հայր. 2, 1972 թ.) արդէն միայն «թաք» փոփոխութիւնն է: Նժդեհի երկերում հանդիպում է թագցնել մեր օրերի համար հնացած բառային փոփոխութիւնը. «...այլեւ չեն **թագցնում**, որ...» (231): Գ-ք անցումը փոխել է ունեցել նաև Բաբո փեղանուան մէջ, նախկին փոփոխութիւնն է Բագո. «...**Բագոյի...** փայտիկով շարժուող Կարմիր բանակը...» (56):

Մի շարք բառերի սկզբում կապարուել է ո - օ անցումը՝ ովասիս - օագիս, ովկիան - օվկիան, ովսանա - օվսանա: Զոյգերի առաջին անդամները հնացած, երկրորդները նոր փոփոխություններ են. «...նա **ովասիս** է փնտրում...» (168). «Պայքար կայ հայոց զաղաշխարհում՝ ...մեր մէնաոր **ովասիսներում**» (186). «...դէպի համամարդկայնութեան **ովկեանը...**» (148). «...մարագուտեց մեր պաճութեան ալեծով **ովկիանում...**» (244). «...**ովսանա՛** կանչում այս կամ այն... ըմբիշին» (587):

բ. Ննջիւնների կրճատում: Այսպէս անմիջականօրէն նկատելի են պատմական հնչիւնափոխութեան հետեւանքները: Նանդիպում են -ումն վերջածանցով բառեր, մինչդեռ Ի. դարի սկզբից դրանք արդէն կորցրել էին «ն» վերջահնչիւնը, և ունէինք -ում վերջածանցը: Ճիշդ է, Մր. Մալխասեանցի բառարանում այս կարգի բայանուն գոյականները ներկայացուած են «ն» վերջահնչիւն ունեցող ածանցով, սակայն այդ որպէս միայն պատմական իրողութիւն: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ում (1969-1980 թթ.) վերոնշեալ ածանցի «ն» հնչիւնը չկա: Այս կերպ բացատում, լքում, պղծում բառերը ներկայ դեպքում ունեն իրենց հնացած փոփոխություններ՝ բացատումն, լքումն, պղծումն: «...**բացատումն** բոլոր փեսակի պարտականութեանց» (32). «...դա հայրենասիրութիւնն չէ, այլ՝ **պղծումն** նրա հասկացողութեան» (397). «...մեծ **լքումն** է առաջացնում ժողովրդի մէջ»¹¹:

Միւս շարք բառերում արեւելահայերենում կրճատուել է երկուլեզուային շփական «դ» հնչիւնը՝ անմիջականօրէն յաջորդող նմանառնչ երկուլեզուային ու շփական «խ» հնչիւնի ազդեցութեամբ: Այդ բառերն են՝ բախել, բախում, բիսել, բիսում, սրպարուի. նախկին փոփոխություններն են՝ բաղիսել, բաղիսում, բղիսել, բղիսում, սրպարուիլ. «Չափում են, **բաղիսում են** բանակները...» (116). «...**բաղիսումները** պիտի շարունակեն...» (42). «...Ռազմավարի հանճարը **բղիսում է** իր հոգու վեհութիւնից» (448). «...օգնութեան կը կանչէն... **սրպար**»

11 «Նամականի», Ազգային ակումբ հրատ., 2006, էջ 7:

բուղիս...» (388): Մեր բացառական բառարաններում թելն յիշարակուում են նշում հին փարբերակները, սակայն «տեն» նշումով՝ հղում կապարելով դեպի առանց «դ» հնչյունի գործածական ձևերը, իսկ բերողով վկայությունները գեղարուեստական գրականությանից, բնականաբար, իրենց ժամանակների հեղինակներից չեն, այլ՝ անցեալի: «Ալել» բառում ժամանակին գրուել է արմարական «ե» երկհնչյունը՝ արքասանուելով «է». «աւելել», ինչը գրւում ենք հազաւղէպ գործածուած. «Առիծը... պոչով **աւելում** է իր հեարքերը» (114):

գ. Ննչինափոխութիւն: Այս լեզուական երեւոյթի հետ կապուած մեզ հետաքրքրում են «աղէր», «արգել», «մէռն» արմարները: Առաջինի կազմութեամբ մասնաւորապէս ունենք՝ աղէրալի, աղէրաւոր ածականները, իսկ երկրորդով՝ արգելել բայը: Քննութեան առնուող ստեղծագործութիւններում յաճախ գործածուում են աղիւրալի, աղիւրաւոր, արգիլել փարբերակները: «**Աղիւրալի** է փարութեան ինքնաներշնչումը...» (58). «**Աղիւրաւոր** չէ կորուստներ ունենալը..., **աղիւրաւոր** է վերագնահատումների անընդունակ լինելը...» (287). «Զօրավար Ղազարովը... **արգիլեց** իմ արշաւանը...» (311). «...նա **արգիւում** է ձերբակալութիւններ... նա **արգիւում** է բարբարոսութիւնը...» (287): Սակայն յիշեալ հնչինափոխութեամբ բառաձևերը գրական արեւելահայերէնում գոյութիւն չունեն. «աղէր» բառում ու դրանով կազմութիւններում /է/-ն չի փոխուում /ի/ հնչյունի, իսկ «արգել» արմարում առկայ է «ե» երկհնչյունը, որ ընդհանրապէս «ի» չի դառնում: Սր. Մալխասեանցի արդէն յիշարակուած բացառական բառարանում, առաւել եւս հետագայ բառարաններում մեջբերուած «ի»-ով փարբերակները չեն յիշարակուում: Գ. Նժդեհը, իր սկզբունքին համաձայն, բառային փարբերակների մէջ էլ իր նախընտրութիւնը կարող է փայլաւելի հինին, երբեմն հնագոյնին, հազաւղէպին՝ ներկայ դէպքերում հետեւելով Նոր Նայկազեան բառարանին, որտեղ յիշարակուում են «աղիւր» եւ «արգիլ» հնչինափոխուած արմարներով բարդութիւններ: Նոյն կերպ «մէռն» բառի փոխարէն մէկ անգամ գրւում ենք գործածուած հազաւղէպ հանդիպող միտոն նախնական անհնչինափոխ փարբերակը. «...**միտոնով** օծուած նրա ճակարը» (592):

դ. Բառի մի հնչյունի փոխարինում մէկ ուրիշով: Այսպէս անդրադարձ կլինի մի շարք այնպիսի դէպքերի, երբ ներլեզուական օրէնքների ազդեցութեամբ (առնմանում, փարմանում, համաբանութիւն, բարբառների ներգործութիւն, նկարելի է նաեւ պարահակաւորութեան դերը) բառի հնչինակազմում մի հնչյուն փոխարինուում է մէկ ուրիշով: Առաջ են գալիս հին ու նոր փարբերակներ: Նախորդ հնչինով բառաձևը աստիճանաբար մոռացուում է, բայց ոչ Նժդեհի երկերում, որտեղ, ինչպէս միշտ, դրանք դիպուում են որպէս լեզուական հարստութիւն եւ, յարկապէս, կապող օղակներ լեզուի հին ու նոր վիճակների միջեւ, ուստի ժամանակ առ ժամանակ գործածուում են նոր բառաձևերի հետ զուգընթաց: Ահա այդ շարքը՝ իր հնչինական անցումներով:

Ր-ռ: Իրողութիւնն առնչուում է գրաբարեան այն յայտնի լեզուական օրէնքի հետ, ըստ որի բառում «ն» հնչյունից առաջ ունենում ենք «ռ», իսկ միւս դիրքերում նոյն բառերում՝ «ր»: 1920 թուից յետոյ, երբ գրուել է Նժդեհի երկերի մեծագոյն մասը, յիշեալ օրէնքն այլեւս չէր գործում, նախորդ՝ ր-ով բառաձևերը հնացել էին, եւ բառերում բոլոր դիրքերում արդէն ունենում ենք «ռ»՝ ամառ - ամռան, ամառանոց, ձմեռ - ձմռան, լեռ - լեռան, դուռ - դռան: Քննութեան առնուող խօսքաշարերում գործածուում են նշում բառերի ր-ով ձևերը՝ ամ-

րան, ամառանոց, ձմրան, լեռան, դրան: Օրինակներ. «...եթե մէկը **ամրան** գեղեցկութեամբ հիանայ եւ չմտածէ **ձմրան** մասին...» (56). «...հայ **ամառանոցի** վրայ թշնամին դեռ ուրք չի կոխել... **...հայ ամառանոցի** վրայ փրփող ...լուծիւնը...» (565). «...վերահաս **ձմրան** դաժանութիւնից սարսափահար...» (448). «...Նպար **լեռան** վրայ...» (487). «Վոլա **լեռան** վրայ անիծեց Բոլբեր...» (200). «...դաւարանի **դրան**... կարելի է փեսնել մի խումբ կանանց... ապագայի **դրան** արթուն հսկող...» (210, 232):

Դ-դ: Խօսքը երկու բառի մասին է՝ ճիշդ եւ ճշդել: Այս նախնական ձեւերից արեւելահայերէնում ունենք՝ ճիշդ եւ ճշպել. Խոյ «շ» հնչիւնի ամոմանութեամբ՝ խոյ «դ»: Դ-ով փարբերակները պահպանուել են արեւմտահայերէնում ներկայ դէպքում ուսումնասիրուող գործերում: Ինչպէս. «**Ճիշդ** է, սուրբ է հայրենի հողը... **ճիշդ** է եւ այն...» (525). «**Ճիշդ** է, չկան անփականք ազգեր...» (194). «Պէտք է **ճշդել** մեր ցեղի այն գիծը... **...ճշդենք** խնդիրների կարեւորութեան չափը...» (535, 548):

Ե-ա: Գործածուած է «ե» խոնարհման երէք բայ՝ դորդել, խլրպել, մոնչել, ներկայումս պարկանում են «ա» խոնարհման՝ դորդալ, խլրպալ, մոնչալ, ինչը հետեւանք է համաբանական: «Ա» խոնարհման բայերի մեծագոյն մասը չեզոք սեռի է, նշուած երէքը նոյնպէս, իսկ բնաձայնական բայերն ուղիղ ձեւերում ընդհանրապէս ունեն -ալ վերջաւորութիւնը: Բայց հանդիպում են. «...նրա ծայնն է **դորդել**...» (14). «...աւելի եւս **դորդեց** նրանց ազգայնական մոլեռանդութիւնը...» (227). «Մալականները կարող են... **խլրպել** մեր զօրամասերի թիկունքում...»¹². «...վագրը կը **մոնչէր**...» (530). «Արդարութեան առիծը **մոնչեց**...» (590):

Դ-լ: Այս անցումը նկատելի է յունարէնի երէք յափուկ անցումներում՝ Պլափուն, Թալես, Օլիմպոս եւ դրանցով կազմուած բարդութիւններում՝ պլափոնական, օլիմպիական: Մեզ համար հնացած փարբերակներում «լ» հնչիւնին նախորդել է «դ»՝ Պղափուն, պղափոնական, Թալես (Նժդեհը կազմել է նաեւ՝ թալեսաբար), Ողիմպոս, Ողիմպիական: Նկատենք, որ երկու բառում միաժամանակ առկայ է նաեւ ուղղագրական գործօնը՝ ո - օ անցումով: Մէջբերումներ. «Իմաստասէր ես՝ եղի՛ր **Պղափուն**: **...Պղափունի** գաղափարների մասին...» (366, 373). «**...պղափոնական** սէր քարոզելով...» (31). «Իմաստասէրներից **Թալեսը** սովորութիւն ունէր... **...մենք թալեսաբար** նոյնը կատարենք» (444). «**...Ողիմպոսի** աստուածները չքացան» (402). «...ձեզ փեղ կփան **Ողիմպի** վրայ» (25). «Ինչ արժէ հանճարը, երբ իր **ողիմպիական** մեծութեան մէջ... անկարելի է» (146). «...որոնց համար չէ **ողիմպիական** մեծութիւնը» (472):

Գ-բ: Այսպէղ հարցը գ-բ –ի հանրածանօթ ուղղագրական-ուղղախօսական կանոնը չէ: Նկատի ունենք «արծագանք» ապա նաեւ «արծագանքել» բառերը, որոնք ի սկզբանէ գրուում եւ արտասանուում էին արծագանգ եւ արծագանգել: Ըստ Նր. Աճառեանի մեկնութեան, բաղկացած են գանգ բնաձայնական արմաքից, որից գանգիւն ձեւը (հնչիւն, իրերի բախման ձայն), իսկ արծագանք ձեւով փարբերակը համարում է սխալ գրչութեան հետեւանք: Արեւելահայերէնում այս սխալ գրչութիւնը եւ արտասանութիւնը հաստատուեց՝ իսպառ դուրս մղելով նախնական փարբերակը: Վերջինս պահպանուել է արեւմտահայերէնում, բայց այսփեղ էլ շարք է զանազանութեան արտասանութիւնը՝ արցաքանք: Ինչպէս եւ սպասելի էր, Նժդեհը շարունակում է գործածել սկզբնական արծագանգ փարբերակը:

12 «Նամականի», Ազգային ակումբ հրապ., Երևան, 2002, էջ 17:

Եւ քանի որ գրում էր արեւելահայերէն, կարելի էր ենթադրել, որ հեղինակը էր գրութեան եւ արքայասանութեան նոյնութեանը՝ արձագանգ. «Իբրեւ օտարի կենդանի **արձագանգը...**» (308), «...մէկի սպուներն են, միսի **արձագանգը...**» (570), «...Նրանց բրիչների ձայնն **արձագանգում է...**» (489), «...առաջինը լինելով **արձագանգեց** Բոսսոնի ուսանողութիւնը» (253):

Ա-է: Առնչուում է մէկ բառի հետ՝ ածան-էծան: Նանրայայտ է, որ աւելի հին փարբերակն է՝ ածան, որորվհետեւ առաջ է եկել արժան բառից «ր» հնչյունի կրճատումով: Երկրորդ «ա»-ի ազդեցութեամբ, փարնմանութեամբ, բառասկզբում ունենք «է»: «Էծան» փարբերակը հասարակութիւն է արեւելահայերէնում, ածանն իսպառ դուրս է մղուել: Պահպանուել է քննուող գործերում. «**Ածան** ձեռք չի բերում առիծի մորթին» (569), «...կեղծ եւ **ածան** հաշարութիւն քարոզել...»¹³. «Միայն հասկացած սպորտը... փանում է ամբոխից խլած **ածան** դափնիներ» (23): Նկատենք, որ առաջին մէջբերումը «Ջաւակա» լրագրային յօդուածից էր, գրուած 1940 թուին, յաջորդ երկուսը՝ բարեկամներին ուղղուած նամակներից՝ 1936 թ. եւ 1937 թ., երբ վաղուց միակ փարբերակն էր՝ էծան:

Կ-գ: Առնչուում է գանկ - գանգ փարբերակների հետ, որոնցից նախնականը, մոռացուածը առաջինն է: Երկրորդում առնմանում է նախորդող ձայնեղներին. միակ գործածականն է: Կապարտող մէջբերումներում, անշուշտ, նախնական փարբերակն է. «...սաղաւարպն ու **գանկը...**» (557), «...բացէ՛ք սրանց **գանկն** ու կտրծը...» (181):

Ս-գ: Բառային փարբերակներն են՝ քարպէս - քարպէզ: Առաւել շար հանդիպող բառային փարբերակների գոյգերից վերջինը: Քանի որ փոխառութիւն է յունարէնից, ուստի հարազատը «էս» վերջաւորութիւնն է, ուրեմն եւ նախնական փարբերակն է՝ քարպէս: Անցումը «գ»-ի աւելի ուշ շրջանի փոփոխութիւնն է, եւ «քարպէզ» փարբերակը՝ աւելի նոր: Մեզանում միակ գործածականն է, լրիվ դուրս է մղել նախնական փարբերակը: Վերջինս պահպանուել է արեւմտահայերէնում եւ Նժդեհի երկերում, բնականաբար, գրութեանը համապատասխանող արքայասանութեամբ. «...աշխարհի **քարպէսից** անհեղափառ վրանգը...» (107), «...բացէ՛ք **քարպէսը**... դիմէ՛ք **քարպէսին**... **քարպէսը** ցոյց կտայ...» (27):

3. Քերականական փարբեր: Գրաբարի՝ մեր նախնեաց լեզուի ներկայութիւնը ամենուրեք է: Շարադրուող գաղափարներին, հարցադրումներին համապատասխան շարունակ կատարում են մէջբերումներ Աստուածաշնչից, հայոց բանահիւստութիւնից, Խորենացուց, Նարեկացուց, Շնորհալուց եւ ուրիշներից, արքայայտուած մարքերն ընդգծելու համար լրացուում են գրաբար ասոյթներով, նախադասութիւնների կառուցումներում ներառւում են գրաբարեան բառաձեւեր: Իր գաղափարախօսութեան համաձայն Գ. Նժդեհը վճռորոշ նշանակութիւն էր փալիս հայոց հին լեզուին՝ հեղափոխութեան, որ ցեղի սերունդները անցեալ ժամանակը զար-զար չդիպեն, եւ ամբողջական լինի մեր պարսմութիւնը. «Թոյլ մի փար, որ ցեղիդ սրելոծագործութեան եւ հայրենաշինութեան շրջան ընդհատուի» (Ջորավար Գարեգին Նժդեհը Տարօնականութեան մասին) (554): Ազգերի ճակատագիրը կրում է ոգին՝ սրելոծից ազգերի արժէքների, փառքի: Իսկ ոգին սնուում է անցեալով, արդիւնք սերունդների ապրումների, ոգորումների, բարոյականութեան, պաշտամունքի, ուժի, ինչպէս հիմնադրուած է «Ինչու Տարօնականութիւն» յօդուածում: Դիմելով գրաբարին՝

¹³ «Նորայայտ նամակներ», Նայասարանի ազգային արխիւ, Երեւան, 2011, էջ 20:

հեղինակը նպաստում է իր առջև դրուած խնդրի լուծմանը, ապա նաև շարադրանքին փախիս հանդիսաորութիւն, ինչը յափուկ է բարձր ոճին: Գործածուած են թէ՛ յոլովական, թէ՛ խոնարհական հնացած քերականական փարբեր խառն աշխարհաբար նոյնիմաստ բառաձևերի հետ յաճախ միեւնոյն նախադասութեան մէջ: Կանգ առնենք դրանց վրայ առանձին-առանձին:

ա. Յոլովական բառաձևեր: Ուղղական յոլովով գրաբարեան բառաձևերը քիչ են: Նանդիպում են յոգնակի թուում՝ կայծակուրեք, այլք, նոքա: Շարք են միւս յոլովներում: Սեռական յոլովում «ո» յոլովման բառաձևերը, ի փարբերութիւն միւս յոլովումների պարկանողների, աւելին են թէ՛ եզակի, թէ՛ յոգնակի թուում: Իր ժամանակի հայերէնի եզակիում՝ յոյսի, պարսի, փարայ, եկեղեցու բառաձևերի փոխարէն գործածուած են յուտյ, պարտյ, փարտյ, եկեղեցտյ գրաբարեան բառաձևերը: Ինչպէս. «Որպէս **յուտյ** եւ փրկութեան միակ խարիսիս մնում էր մարտնչող Զանգեզուրը»¹⁴. «...առանց հարկի **պարտյ** վերք ստանալու» (134). «...**փարտյ** եղանակների նման...» (80). «Ինքնապաշտպանութիւնը հայ ժողովրդի - ահա՛ հայ **եկեղեցտյ** նոր հաւաքամբը» (66): Յոգնակի սեռականով ու փրականով բառաձևերից են՝ այլոց, բիւրոց, գործոց, մարդոց: «Նուազ զբաղուիր **այլոց** թերութիւններով... մտածել **այլոց** ցաւերի մասին...» (363, 368). «[Միւրքը] իր մէջքը կամուրջ էր դարձրել նահանջող **բիւրոց** համար...» (159). «Դեռ երէկ էր, ...ներքին **գործոց** նախարարը...» (526). «Այս... սպանութիւնը վերագրուեց ինը անմեղ հայ **մարդոց**...» (221):

Մի շարք բառաձևեր յոգնակի սեռականում ժամանակի բնորոշ -երի կամ -ների քերականական մասնիկների փոխարէն ունեն -աց վերջատրութիւնը, որը յափուկ է գրաբարեան «ա» յոլովմանը՝ կայսերաց, թուրքաց, չարեաց, պարսկականաց, փառաց. «...Նայաստանը դաստակերպ **կայսերաց**... կը կոչուէր...» (457). «...անարիւթիւնը՝ մայրը բոլոր չարագործների եւ **չարեաց**» (442). «Մի դրոշակ, այսպիսի մակագրութեամբ - ...«**Պարսկականաց** արշաւանք...»¹⁵. «Մեր ցեղն էլ է կրել իր անկախութեան ու հզօրութեան ծիրանին՝ իր **փառաց** զգեստը»¹⁶:

Սակայն յոգնակի սեռականում ու փրականում քանակով անհամեմատ շարք են այն բառաձևերը, որոնք, կազմուած լինելով -ութիւն վերջածանցով, պարկանում են «ա» ներքին թերման եւ ունեն -ց վերջատրութիւնը: Այսպէս, փրկելութիւնների, պարկականութիւնների, մանրամասնութիւնների, պարկութիւնների, փրամադրութիւնների՝ իր ժամանակի փրածուած ձևերի փոխարէն գործածուած են փրկելութեանց, մանրամասնութեանց, պարկականութեանց, պարկութեանց, փրամադրութեանց. «Շնորհակալութիւն փրածող **փրկելութեանց** համար... ...դաի **մանրամասնութեանց** մասին կը գրեմ շուրով»¹⁷. «...պարկականութեանց անթերի կարարում» (648). «...ներպական **պարկութեանց** անհամաձայնութիւնների շնորհիւ...» (268). «Այս դէպքերը զարգացան բոլորովին հակառակ մեր **փրամադրութեանց**, արարքին իրողութիւնների թելադրութեամբ» (54): Այլ օրինակներ. Կազմակերպութիւնների, կուսակցութիւնների, իրողութիւնների, թերութիւնների, խորհրդածութիւնների, յաջողութիւնների, պարկութիւնների ձևերի փոխարէն՝ կազ-

14 «Նայրենիք» ամսագիր, Ազատ Միւրք, թիւ 12, նոյեմբեր 1925:

15 «Նայրենիք» ամսագիր, թիւ 2, 1923:

16 Գարեգին Նժդէհ, Նարեկեցի, Ամարաս հրատ., Երեւան, 2006, էջ 462:

17 «Նորայայտ նամակներ», Նայաստանի ազգային արխիւ, Երեւան, 2011, էջ 10, 20:

մակերպության, կուսակցության, իրողության (քիչ վերը գործածում էր իրողությունների), թերության, յաջողության, պարության, «...կը հրալիրեն երկրասարդական կազմակերպության ներկայացուցիչներին...»¹⁸. «Մեր **կուսակցության**... «մարտական միջոցը»... **իրողության** խեղաթիւրումը... իր հակառակորդի **թերության** քննադատութեամբ...» (69). «**խորհրդածության** այս էջերն... ...իրենց **յաջողության** եւ **պարության** պարծառները...» (75, 82) եւ այլն:

բ. Տայցական յոլով: Այս յոլովով եւ «զ» նախդիրով բառաձեւերն առնչուում են դերանունների հետ, որոնք են՝ ամենայն, որ/ը/, այն: «Ամենայն» բառով օրինակները հազարէպ են. «Նրա համար գրականութիւնը, նախքան **գամենայն**, եղաւ մարգարէացումների միջոց...» (148): Անելի շար են «որը» դերանունով օրինակները՝ թէ՛ եզակի, թէ՛ յոգնակի թուով. «Այդ քաղցրութիւնը, **գոր** զգալու համար հայ մարդը...» (172). «...**գոր** շար-շարերը, գուցէ եւ չեն էլ ճանաչում...» (103): Կամ. «...կան աւելորդ կարիքներ, ...**գորս** սնուցում ենք որպէս մակաբոյծներ...» (99). «...որքան հպարտ, այնքան փխտր է շէշըր զէնքի իմ եղբայրների, **գորս** կ'ոգեկոչեն...» (164): Նախորդ երկուսից «զ» նախդիրով անհամեմատ շար է գործածուած «այն» դերանունը: «...Յեղակոսն շարժման եւ **գայն** սկսող անձի դէմ...» (Սժողեհի նամակներից)¹⁹. «...հեռացնել հայութեան ուշադրութիւնը եւ **գայն** զբաղեցնել Նժողեհով... այդ շարժումը ապրեցնելու եւ **գայն** համագաղութայնացնելու համար...»²⁰. «...պարագիր հայութեան մէջ արթնացնել ցեղը ... **գայն** մի եւ անբաժան ազգի վերածելու համար» (600):

Տայցականով դրուող միւս՝ գրաբարը յիշեցնող բառաձեւն առնչուում է «ի» նախդիրի հետ, երբ արտայայտում է ներգոյական յոլովի իմաստ: Նկատելի է յաշս յոգնակի թուով բառաձեւի յոգնակիի գործածութիւնը՝ յաշս մարդկութեան, յաշս օտարների, յաշս հայութեան, յաշս ժողովրդի եւ այլն, փոխանակ ժամանակի համար սովորական եզակի ներգոյականով «աչքում» ձեւի. «...փորձելով **յաշս** մարդկութեան արդարացնել թուրքը» (192). «...մեռած Ղեւոնդի արժէքը **յաշս** օտարների բարձրացնելու նպատակով... **յաշս** ազգայնական հայութեան այլեւս կնքած էր իր բարոյական մահկանացուն...» (211, 222):

գ. Գործիական յոլով: Այս յոլովով դրուած բառաձեւերն ունեն յետեւեալ դրսեւորումները: Նժողեհն իր գրութիւններում գործածում է այս, այդ դերանունների այստ, այդու յոլովաձեւերը, որոնք յարույկ էին գրասենեակային, պաշտօնական ոճերին եւ ընդունուած Ի. դարի առաջին կէսերին: Քանի որ ներկայումս արեւելահայերէնում գրութիւններում համապարասխան փոխակապական նախադասութիւնները կազմուում են առանց այստ, այդու բառաձեւերի (բաւարար են համարուում «յայտնում ենք», «փեղեկացնում ենք», «հաղորդում ենք» եւ նմանօրինակ այլ բայեր), ուստի անցեալի գրականութեան մէջ դրանք մեզ համար դիպուում են իբրեւ գրաբարեան քերականական քարացած ձեւեր: Կարարենք մէջբերումներ. «Յարգելի ընկեր Վրացեան **այստ** անհրաժեշտ ենք զգնում հաղորդակից անելու Ձեզ... ...**այստ** հարկ ենք համարում անդրադառնալ այդ խնդրին...» (Սժողեհի նամակներից)²¹. «Մպայութիւնը դէմ էր փեղահանութեան, որովհետեւ **այդու** նոքա զրկում էին հարստանալու հնարաւորութիւնից... **այդու** պատճառ է դառել, որ...» (321, 339). «Լեռ-

18 «Ազգ», 12 փետրվարի 2011:

19 Անդ:

20 «Նորայայր նամակներ», Տայաստանի ազգային արխիւ, Երեւան, 2011, էջ 6:

21 ՅԳ- կենտրոնական արխիւ, դատական գործ թիւ 9698:

նահայաստանի կառավարությունը և սպարապետությունը **այսու** անհրաժեշտ են նկատվում յայտնելու Ձեզ յեփեհալը... **...այսու** յայրնում եմ Ձեզ...» (Նժդեհի նամակներից)²²:

Կան գրաբարաձեռ գործիականի -ալ վերջավորությունամբ բառաձևեր՝ դժուարաւ, կանխաւ, հրապարակաւ, դիւրաւ, որոնք նոյնպէս լինելով քերականական քարացած ձևեր՝ մակբայական իմաստ են ձեռք բերել. «Նախանձողի աչքը **դժուարաւ** է քանում փառքի փայլը» (364). «Զանգուածը, որպէս այդպիսին, չի դադարում ամբոյս լինելուց, ասել է՝ **դիւրաւ** ազդելուց»²³. «Ճակարամարտերից առաջ, **կանխաւ** պարտւած պիտի համարել այն ժողովուրդը...» (529). «**...կանխաւ** գիտէր, թէ ինչ է լինելու մեր պատրասխանը...»²⁴. «հայերի նոր ջարդի կոչը խնդիրը թուրքերը ծեծում են **հրապարակաւ**...» (701). «Մի հայ սպա... **հրապարակաւ** գոչում է՝ «Կեցցե՛ր երրորդ միջազգայնականը» և ձերբակալում պարսից ռաբիկանութեան կողմից»²⁵:

Այլ բառաձևեր առնչւում են գրաբարեան յոգնակի գործիականի հետ և ունեն -օք վերջաւորությունը՝ աճապարանօք, յարգանօք, մրօք, շնորհօք. «Առաջանում ենք **աճապարանօք**...»²⁶: Յարգանօք բառաձևը գործածուած է նամակներում՝ որպէս աւարտի խօսք. «**Յարգանօք**՝ զօրավար Նժդեհ»²⁷: Օրինակներ միւս բառաձևերով. «Ների՛ր, Տեր, ...հայրենիքիս օգրակար լինելու **մրօք** մեղանչեմ կամքիդ դէմ» (657). «...ճանաչում եմ **շնորհօք** Լենինի հայագգի բոլշևիկներ, որոնք...» (204):

Գրաբարեան «ի» յոլովման գործիականի հետ առնչուող բառաձևերից են՝ բանի (նաև միով բանի բառակապակութեան մէջ), խաբի. «Նա **բանի** և գործով հասարարել է Ֆիխպէի խօսքը...» (253). «**...միով բանի** - դա ասել է թշնամանել հարազատ հայրենիքին» (278). «...ինքը պարտեց և պարտեց **խաբի**...» (89):

Բ. Բայաձևեր: Մի խումբ բայաձևերի հնացած լինելն արտայայտուած է կազմութեան մէջ: Դրանք ունեն -ան- տոկածանցը, մինչդեռ Ի. դարի առաջին կեսին այլևս չունէին: Ինչպէս. ապացուցանել - ապացուցել. «...յանձնարարում է **ապացուցանել**, թէ մեր դժբախտ հայրենիքում էլ մարդիկ հաց են ուրում» (207): Կառուցանել - կառուցել. «...Ի՞նչն է **կառուցանում** մեր ճակարագիրը» (231). «**...կառուցել** աւելի լաւ...» (356): Նաւորացանել - հաւորացել. «Ո՛վ պիտի **հաւորացանի** նրան, ո՛վ պիտի վճարի» (200): Մաւորացանել - մաւորացել. «**...շնորհ**՝ **մաւորացանել** Աստուծոյ...» (444): Սնուցանել - սնուցել. «Թուրքիւնը ծնուած է **սնուցանելու** ուժը» (438):

Ժխարկան խոնարհման մէջ, երրորդ դէմքում, շար ու շար յաճախ գործածուում է «չէ» օժանդակ բայը, թէև նախորդ դարում դրանում հասարարուել էր «է»-ի հնչունափոխությունը, և բայերից առաջ դրուում էր «չի»: Մէջբերումներ երկերից. «...յայրարարեց, թէ **չէ** մասնակցելու... քօնակարարութեան, ... որին **չէ** հաւարում»²⁸. «...մեր կրիներով **չէ** սկսուել և մեզանով **չէ** վերջանալու» (166). «...այսպէս **չէ** ուզում ապրել նորահաս սերուն-

22 «Նամակնի», Ազգային ակումբ հրատ., 2012, էջ 25:

23 «Հայրենիք» ամսագիր, Սօֆիա, 1923:

24 «Հայրենիք» ամսագիր, 1925:

25 Անդ:

26 «Հայրենիք» ամսագիր, 1923:

27 Նամակ Ս. Վրացեանին և ՆՅԳ գերագոյն կոմիտէին, 14 հուլիսի 1921:

28 «Նորայայր նամակներ», Նայաստանի ազգային արխիւ, Երևան, 2011, էջ 11, 19:

դը» (246): Չէ ժխտական օժանդակ բայն է դրուած նաեւ կարելի, կարող բառերից առաջ. «...նրան **չէ** կարելի վախեցնել...» (374). «...**չէ** կարելի ներքնապէս ճանաչել կուսակցութիւնները եւ վճռապէս ժխտել կուսակցականութիւնը» (630). «Առանց այդ՝ առաքինութեամբ մարդ **չէ** կարող անկախութիւն ունենալ» (Նժդեհի նամակներից)²⁹. «Նայութիւնը ...**չէ** կարող ներել նրանց...» (273): Շատր դէպքերում օժանդակ բայի **չէ** ժխտականը միախառն գործածուում է չի ձեւի հետ, երբեմն մէկը միւսից մէկ-երկու քառ անգ կամ նոյն նախադասութեան մէջ: Իրողութիւնը ցոյց է փայլիս, որ Նժդեհն այդ անում է նպատակորոշում՝ ոճ սքեղծելու եւ ժամանակ առ ժամանակ հինի վերադառնալու միտումով: Ահա. «Ով **չէ** փառապել՝ **չի՛** աճել, **չի՛** հօգորացել՝ ոգով» (372). «Նա **չէ՛** րեսաբանում, **չէ՛** լուսաբանում, նա միայն յարձակուում է... Նա ոչ միայն **չի** լուսաբանում, այլ եւ...» (203): Ահա նաեւ յօդուածի վերնագիր՝ «Ռազմիկը **չէ** մեռնում»: Քիչ անց խօսքաշարում արդէն կարդում ենք՝ «Ռազմիկը **չի** մեռնում» (660): Եւ այս միախառնութիւնը՝ բազմաթիւ դէպքերում:

Ժամանակակից հայերէնին ոչ բնորոշ մի շարք խոնարհական բառաձեւեր երկերում գործածուում են մէկ - երկու անգամ, սակայն իրենց ամբողջութեան մէջ նպաստում են լեզուի հին շրջանների ներկայութեանը: Այդ բայաձեւերից են՝ կամիմ, պարտիմ, գերադասուել են իր ժամանակի ընդունուում «կամենում եմ», «պարտաւոր եմ» ձեւից. «Յեղակրօն եմ, ասել է՝ **պարտիմ, կամիմ** կարող եմ գերազանցել, եւ պէ՛տք է գերազանցեմ ցեղիս թշնամիներին...» (249): Ծնին. գրաբարեան «ի» կրատրաձեւ խոնարհում՝ ծնունն. «...քո աճիւնից շանթանման հերոսներ պիտի **ծնին**» (655): Արք. հրամայական եղանակ, եզակի թիւ՝ խմիր. «...մարդկութիւնը... կը պատրասխանէր. - Ծարաւ ես, **արք** արցունքդ...» (437): Ունենալ անորոշ դերբայը գործածուում է «ունենալ» դիմաւոր ձեւի փոխարէն. «...լուծման սերտ կապ պիտի **ունենալ** եւ մեր բախտի փնտրիւմը» (Նժդեհի նամակներից)³⁰:

Երկու դիմաւոր բայաձեւ գալիս են ժխտական խոնարհումից՝ չմարտց (չմարտցեց), չիցե (չիցին). «Այդ կիմը հարգանք **չմարտց** ...իր հոր դիակին...» (176). «...**չիցե** բուն են մարդկերը հայոց...» (407):

* * *

Եւ այսպէս. Գարեգին Նժդեհը սկզբունքօրէն դիմում է հնացած բառերին, բառային փարբերակներին, քերականական փարբերին՝ դրանք միախառնելով ժամանակի լեզուին՝ առաջ փանելու համար իր գաղափարախօսութիւնը՝ մի ցեղ՝ սերունդների մշակոյթի մի ամբողջութիւն: Յեղից անբաժան է լեզուն՝ իր բոլոր շրջաններով, նաեւ՝ ուղղագրութեամբ:

Գարեգին Նժդեհն իր սքեղծագործութիւնների հիմնական մասը գրել է 1905 - 1955 թթ. միջակայքում: Այս յիսուս փարբերի ընթացքում մեր լեզուում կատարուել էին բառակազմի նշանակալից փոխաշարժեր, քերականական մասնիկների, բառաձեւերի մեծ թուով փոփոխութիւններ, որոնց մի մասին անդրադարձ եղաւ առն յօդուածում: Ի. դարի առաջին կէսին հայերէնը որակապէս փարբերուում էր նոյն դարի երկրորդ կէսի հայերէնից: Գարեգին Նժդեհը սկզբունքօրէն հետախայեաց դիմում է նաեւ ուղղագրութեանը: Որոշ հապտածներում, երբ գործածում է օժանդակ բայի «չէ» ժխտականը, եզակի երրորդ դէմ-

²⁹ «Ազգ» օրաթերթ, 12 փետրվարի 2011:

³⁰ ՀՀ պետ. արխիւ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ. 11-13 եւ շրջ.:

քի դեռ չհնչիւնավորուած բայաձևերը, -ան- սոսկածանցով հնացած բայերը, նրա լեզուն յիշեցնում է ԺԹ. դարի երկրորդ կեսի գրողների (Մ. Նալբանդեան, Բաֆֆի, Մուրացան...) լեզուն:

2002 թ. Արխիւային գործի գործակալութիւն հրապարակութիւնը տպագրել է Գարեգին Նժդեհի ստեղծագործութիւնների երկհատորեակը՝ նոր ուղղագրութեամբ: Սոյն յօդուածում քննութեան առնուած բոլոր տեսակի հնաբանութիւնները՝ բառային, թէ քերականական, փոխարինուած են մեր օրերի հայերէնի հոմանիշներով: Լեզուական փոփոխութիւնները հանդիպում են իւրաքանչիւր էջում, որոշ պարբերութիւնների իւրաքանչիւր տողում: Այս հրապարակութեամբ առաջնորդուող, կապարուածին անտեղեակ ուսումնասիրողը գործ կունենա մէկ այլ հեղինակի, այլ լեզուի ու ոճի հետ: Ինչպիսի՜ թիրիմացութիւն... Կապարուել է շնորհակալ աշխատանք՝ սկզբունքային յեղաշրջիչ թերութիւններով: Վերահրապարակումներում Գ. Նժդեհի լեզուն թարգմանելու ոչ մի հարկ չկա, քանզի նա ո՛չ գրաբարով է գրում, ո՛չ էլ մի անհասկանալի բարբառով: Պահպանել նրա լեզուն, նշանակում է պահել նրա ոգին: Ահա թէ ինչու, փոխել Նժդեհի երկերի լեզուն նշանակում է ընթերցող սերունդին անհաղորդ թողնել մէկ ցեղային առանձնապարտւ ճշակութային ամբողջութեան, նրա որդեգրած գաղափարախօսութեանը եւ դրանում լեզուին յարկացուող վճռորոշ դերակապարտութեանը: